

լեզուաց թարգմանութեանց մէջ կրը-
նայ պահուիլ: Ուստի թէ Յոյն թարգ-
մանիչք քաղղէական մատենին, թէ
Մար Աբաս ե եթէ խորենացի կարելի
է թէ օտար հնչուած տուած ըլլան, ինչ-
պէս են օրինակ իմն կազմուս ե կար-
դոս առուանքն: Բայց այսպիսի զար-
տուգութիւն մը մեծ նշանակութիւն
չունի 'ի պատմութեան, ուր յաճախ կը
տեսնուին փոփոխութիւնք անուանց.
բաւական է միայն անոնց յատուկ ե
ծիշք պատմութեամբ ե ժամանակա-
գրական կարգաւ զանազանեւ զանոնք
իրարմէ, ինչպէս կ'ընէին Նդիպտացիք,
Ասորեստանցիք ե Պարթեք՝ փալաւուն,
Նաբոզգոդոնոսոր ե Արշակ հասարակ
անուամբ յորջորջելով իրենց թագա-
ւորներն 'ի պատմութեան, իսկ ա-
նոնց յատուկ անուանքն ազգային ա-
ւանդից ե դիւանաց մէջ պահել:

Ուրեմն եթէ մինչև հիմայ ըրած
քննադատական ապացուցութիւննիս
'ի նպատակ մարիբասեան պատմութեան
ե հնոյն Հայաստանի աւանդութեան,
զորս կու տան մեզի արդի սեպածն
արձանագրութիւնք՝ եզրակացընենք,
այն առնն կը տեսնենք թէ անիրաւ տեղ
մինչև ցայսօր մեղադրուած է Հայ Հե-
րոգոտոսն, ե անոր զատուորներն ինչ-

պէս որ պէտք է անոր խորը դեռ չեն
թափանցած. վասն զի ինչպէս փոքր 'ի
շատե տեսնուեցաւ, դրիթէ մի ե նոյն
հնութիւնը կու տան մեծին Հայաստա-
նի կամ Արարատեան թագաւորու-
թեան ե իշխանաց թորգոմայ տանը
կամ մեծին Արմենիոյ՝ հին աշխարհի
առ մեզ հասեալ յիշատակարանքն ե
սեպածն արձանագրութիւնք, (ըստ ար-
դի արեւելագիտաց), որոնք մինչև ցարդ
յայտնեցան, ինչ որ տուին Մարիբա-
սեան կամ Մ. խորենացոյ աւանդու-
թիւնքն, թէպէտ ե տարբեր անուա-
նակոյութեամբ. որ աւելի բանասիրաց
տարածայն ընթերցմանն ընծայելու է,
քան թէ իրապէս այնպէս եղած ըլլան:
Ուրեմն այսուհետև կը թողունք Մ.
խորենացոյ ե Մարիբասեան երկասի-
րութեան դատը՝ մեր պատուական վեր-
ծանոցաց առողջ ե ուշիմ քննադա-
տութեան. ե մենք կ'եզրակացընենք
հուսկ 'ի վախճանի, թէ պէտք է պատ-
կառ կալ, մինչև որ դեռ աւելի ստոյգ
ե պատմական հաւաստիք որոշեն ա-
նոնց աւանդածին ստուգութիւնը, որ-
պէս զի չըլլայ թէ սուտ ե անհիմն կար-
ծուած դիպաց դիմակուն՝ ամենա-
ստոյգ ե պատուական աւանդութիւնքն
եա անհետանան:

Հ. ԲԱՐՈՆՆԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՆՈՐ ՔՆԱՐ

ՀՐԱԺԵՇՏ Ի ՍԻՐԵԼԻՈՑ

Դու որ եկիր Երեւոյր,
Երբ արե ինձ ծագեցար.
Յընտութիւն ինձ պաղկեցար,
Մի՛ մոռանալ, իմ սիրելի:
Իմ անեղման, իմ լոյս արե,
Անուշահոտ վարդին տերեւ,
Լալով տամ ես քեզ ըզբարե,
Մի՛ մոռանալ, իմ սիրելի:
Ո՛հ, իմ ազնիւ երամ երամ՝
Իմ գեղեցիկ վարդ անթաւամ,
Ի քոյ երկրէն ես կը գընամ,
Մի՛ մոռանալ, իմ սիրելի:

Այ իմ քաղցրիկ դու աղանձի,
Ոսկէ իրնէր զարմանալի,
Քեզ տեսողին բեր երանի.
Բարե եկի, իմ սիրելի:
Այ իմ թրջիկ անուշխտիկ,
Մի՛ մոռանալ դու ինձ իսկի.
Ո՛հ իմ սրբոսիս բեհա ոսկի,
Մի՛ մոռանալ, իմ սիրելի:
Իմ աղանձի՛ ձեռացո ելաւ,
Լալու աչքերոյն հեռացաւ,
Քանի նայեմ 'ի վեր յԱստուած,
Մի՛ մոռանալ, իմ սիրելի: